

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2016 թ.
օգոստոսի 18-ի նիստի N 32
արձանագրային որոշման

«Հավելված N 2
ՀՀ կառավարության 2016 թ.
փետրվարի 18-ի նիստի N 6
արձանագրային որոշման

ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

1. Հարկաբյուջետային ռազմավարության և բյուջեի արժանահավատություն՝ մակրոտնտեսական ու բյուջետային ցուցանիշների կանխատեսում

Արժանահավատ հարկաբյուջետային ռազմավարությունը պետք է նպաստի կառավարության հարկաբյուջետային քաղաքականության նպատակների իրականացմանը, այդ թվում՝ կառավարության պլանավորված հարկաբյուջետային հաշվեկշռի ապահովմանը: Այս տեսանկյունից ՊԾՖՀ-ն ունի երեք ոլորտ, որոնք ներառված են նոր ՊՖԿՀ-ում: Դրանք են՝

1) Առաջիկա տարիների հարկաբյուջետային նպատակների սահմանում (բյուջեի ցուցանիշների կանխատեսում). Գոյություն ունի արդյո՞ք հուսալի հարկաբյուջետային ռազմավարություն (որը ներառում է բոլոր տեսակի եկամուտները և ծախսերը): Մասնավորապես պատշաճ ձևով մշակված ռազմավարությունը պետք է ընդգրկի այնպիսի ցուցանիշներ ինչպիսիք են՝ թվային նպատակները, թիրախները կամ կանոնները, ինչպես օրինակ բյուջետային դեֆիցիտը, կառավարության ծախսերը և եկամուտները, կամ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների պաշարների փոփոխությունները:

2) Համապարփակ միջնաժամկետ մակրոտնտեսական կանխատեսում (հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներով). որը արտացոլում է թե որքանո՞վ են այդ կանխատեսումները համակողմանի: Դրանք պետք է բացահայտեն նաև թե ինչպիսի՞ն են մակրոտնտեսական ռիսկերը հարկաբյուջետային ցուցանիշների (ներառյալ եկամուտների, ծախսերի և պարտքի ցուցանիշները) փոփոխությունների դեպքում և արդյոք այդ փոփոխությունները հաշվի են առնվել մակրոտնտեսական կանխատեսումներում:

3) Փաստացի և կանխատեսված հարկաբյուջետային հաշվեկշիռների միջև տարբերությունը, որը ցույց է տալիս թե ինչքանո՞վ է ապահովված պլանավորված հարկաբյուջետային հաշվեկշիռը: Ընդհանուր հարկաբյուջետային կատարողականի համար այս ցուցանիշը առանցքային է:

ՊՖԿՀ-ի այս տարրը առնչվում է բյուջեի հիմքում ընկած կառուցվածքին և բյուջեի պատրաստման գործընթացին: Կարևոր է, որ պետական բյուջեն համահունչ լինի պետության տնտեսության իրական վիճակի հետ, ինչպես նաև հիմնված լինի կառավարության միջնաժամկետ նպատակների վրա:

Բյուջեի պլանավորման ժամանակ ընդհանուր ուղղությունները սահմանելիս պետք է հաշվի առնել կառավարության կարճաժամկետ և միջնաժամկետ հարկաբյուջետային քաղաքականության նպատակները:

Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի ՀՀ Ազգային ժողով ներկայացվող առաջիկա տարվա պետական բյուջեի մասին օրենքի նախագծում պետական բյուջեի դեֆիցիտը (պակասուրդը) չի կարող գերազանցել կառավարության բյուջետային ուղերձում նշված առաջիկա տարվա համախառն ներքին արդյունքի 7,5 տոկոսը:

Համաձայն «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ մասի կառավարության պարտքը տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ չպետք է գերազանցի Հայաստանի Հանրապետության նախորդ տարվա համախառն ներքին արդյունքի 60 տոկոսը: Գնաճի տարեկան նպատակային ցուցանիշը (սպառողական գնի ինդեքս) 2016-2020 թվականներին գտնվելու է $4\% \pm 1.5\%$ -ի միջակայքում:

Բյուջեն հաստատվելուց հետո վերջինիս իրականացումը կարևոր է հարկաբյուջետային/բյուջետային քաղաքականության փաստաթղթերում, ուղղակի արդյունքների հանձնառության և աշխատանքային ծրագրերում տվյալ տարվա համար սահմանված ծառայությունների մատուցման՝ կառավարության կարողությունների իմաստով: Սա կարող է գնահատվել՝ չափելով բյուջեի փաստացի արդյունքները (հիմնական ագրեգացված մակարդակում) բյուջեի նախնական գնահատումների համեմատ, որը սահմանվել է բյուջետային փաստաթղթերում և հարկաբյուջետային հաշվետվություններում:

Արժանահավատ բյուջեի համար նաև կարևոր է, որ եկամուտների կանխատեսումները լինեն, որքան հնարավոր է ճշգրիտ, քանի որ ապահովված եկամուտներն թույլ են տալիս կառավարությանը ծախսեր կատարել: Եկամուտների լավատեսական կանխատեսումները կարող են չհիմնավորված կերպով մեծացնել ծախսային հատկացումները, որի հետևանքով անհրաժեշտություն կառաջանա կամ տվյալ տարվա ընթացքում կրճատել ծախսերի կամ չնախատեսված կերպով ավելացնել փոխառությունների մակարդակը՝ ծախսի մակարդակի կայունությունն ապահովելու նպատակով: Մյուս կողմից, եկամուտների հավաքագրման ցածր մակարդակի պլանավորման դեպքում, կատարվող լրացուցիչ ծախսերը կարող են կատարվել այնպիսի միջոցառումների վրա, որոնք չեն ենթարկվել բյուջետային գործընթացի հսկողությանը: Եկամուտների հավաքագրման արդյունքները կարող են շեղվել ի սկզբանե հաստատված բյուջեից, ինչի պատճառները չեն կարող առնչվել մակրոտնտեսական ցնցումների հիման վրա կատարված կանխատեսումների որակի հետ:

1.1 Արժանահավատ մակրոտնտեսական կանխատեսումներ

Սույն միջոցառման նպատակը/խնդիրը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության տնտեսության հիմնական տնտեսական ցուցանիշները արտացոլելու նպատակով մոդելների մշակման, լրամշակման ու մակրոտնտեսական պատշաճ կանխատեսումների իրականացման անհրաժեշտությունից, որ պայմանավորված է ՊԾՖՀ 2015 ԿՑ-14-ի նոր կատարողականի ցուցանիշի պահանջով¹:

Խնդիրը	ՀՀ բյուջեի պլանավորման արդյունավետության բարձրացման նպատակով արժանահավատ մակրոտնտեսական կանխատեսումների իրականացնելու անհրաժեշտություն		
Միջոցառումները	h/h	Միջոցառումը	Նկարագրությունը
	1	Մակրոտնտեսական կանխատեսման գործիքների կատարելագործում	Կբարելավեն գործող մոդելները, կմշակվեն մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսման նոր մոդելները, կիրականացվեն ավելի ճշգրիտ կանխատեսումներ
	2	Մակրոտնտեսական ռիսկերի գնահատման գործիքների կատարելագործում	Կբարելավեն գործող ռիսկերի գնահատման գործիքները, կներդրվեն ռիսկերի գնահատման նոր գործիքներ
	3	Մակրոտնտեսական քաղաքականության վարչության աշխատակիցների վերապատրաստում	Աշխատակիցների կարողությունների բարձրացման նպատակով կիրականացվեն վերապատրաստումներ՝ մշակված մոդելներին և ծրագրերին համապատասխան

1.2 Բյուջետային փաստաթղթեր

Խնդիրը	Պետական բյուջեի նախագծի քննարկման համար պահանջվող տեղեկատվության համապարփակության և թափանցիկության ապահովում: Տարեկան բյուջեի փաստաթղթերը (գործադիր մարմնի բյուջեի նախագիծը հաջորդ հարկաբյուջետային տարվա համար համապատասխան հիմնավորող փաստաթղթերով), պետք է արտացոլեն կառավարության հարկաբյուջետային կանխատեսումների ամբողջական պատկերը, բյուջեի նախագծերը և փաստացի արդյունքները ընթացիկ և նախորդ տարիների համար:		
Գաղափար	h/h	Միջոցառումը	Նկարագրությունը

¹ Ակնկալվում է միջազգային զարգացման գործընկերների լրացուցիչ աջակցություն հիշյալ նոր կատարողական ցուցանիշի պահանջները բավարարելու համար: Կպահանջվի նաև աջակցություն վերապատրաստման նյութերի պատրաստման և ՖՆ համար նախնական վերապատրաստում իրականացնելու համար:

	1	Օրենսդիր մարմնին հաստատման նպատակով տրամադրվող պետական բյուջեի նախագծում ներկայացվող տեղեկատվության շրջանակի ընդլայնում	Բյուջետային փաստաթղթերում աստիճանաբար կապահովվի լրացուցիչ տեղեկատվության ներկայացում:
--	---	---	---

1.3 Բյուջեում ներառված տեղեկատվության համակողմանիություն հանրության համար

Խնդիրը	Հանրության համար առանցքային հարկաբյուջետային տեղեկատվության հասանելիության ապահովում:		
Միջոցառումները	h/h	Միջոցառումը	Նկարագրությունը
	1	Հանրության համար առանցքային հարկաբյուջետային տեղեկատվության հասանելիության շրջանակի ընդլայնում	Աստիճանաբար կապահովվի հանրության համար հասանելի հարկաբյուջետային տեղեկատվության շրջանակի ընդլայնումը:

2. Հարկաբյուջետային ռազմավարություն: Ռազմավարական պլանավորում, պետական միջին ժամկետ ծախսերի ծրագրերի և պետական բյուջեի կազմում

Ծրագրային բյուջետավորման (ԾԲ) սկզբունքների ամբողջական ներդրումն անմիջականորեն առնչվում է ՊՖԿ բոլոր ոլորտների հետ (ռազմավարական պլանավորումից մինչև արտաքին աուդիտի գործառույթներ): ԾԲ համակարգի ներդրումը գաղափարական առումով հանդիսանում է ՊՖԿ հիմնարար և առանցքային բարեփոխումներից մեկը, հետևաբար, վերջինիս ամբողջական ներդրումը պետք է ներդաշնակ լինի ՊՖԿ գրեթե բոլոր ոլորտների հետ:

ԾԲ ներդրման հիմնական նպատակն է բարելավել հանրային ծախսերի առաջնահերթությունների սահմանումը և բարձրացնել հանրային ֆինանսների կառավարման արդյունավետությունը: Այն հնարավորություն է տալիս բյուջետային տեղեկատվությունը ներկայացնել այնպիսի կառուցվածքով, որը հնարավոր կդարձնի վերահսկել, թե ինչպես է բյուջեն օգտագործվում ընդունված քաղաքականություններն իրականացնելու համար:

Ծրագրային բյուջետավորումը՝ բյուջեի շրջանակներում իրականացվող ծրագրերի վրա հիմնված բյուջետային գործընթաց է, որը ծրագրային կառուցվածքով իրենից ներկայացնում է տեղեկատվություն բյուջեով նախատեսված ծրագրերի նպատակների և արդյունքների վերաբերյալ՝ հնարավորություն տալով այդ տեղեկատվությունն օգտագործելու բյուջետային միջոցների օգտագործման համապատասխանությունը երաշխավորելու և այդ ռեսուրսների օգտագործման օգտավետությունն ու արդյունավետությունը բարձրացնելու համար:

Ծրագրային բյուջետավորման համակարգի ամբողջական ներդրման ռազմավարությամբ նախատեսված միջոցառումները (թիրախները) հավանության են արժանացել ՀՀ կառավարության 13.08.2015թ. նիստի N 38-12 արձանագրային որոշմամբ, ինչով պայմանավորված սույն ռազմավարության մեջ չեն ներկայացվում:

2.1 Եկամուտների պլանավորում

Խնդիրը	Պետական բյուջեի եկամուտների առանձին տեսակների մոդելավորման գործիքների ընդլայնում		
Միջոցառումները	Խ/Խ	Միջոցառումը	Նկարագրությունը
	1	Եկամուտների առանձին տեսակների կանխատեսման մոդելների ընդլայնում՝ ինչպես մակրոտնտեսական ցուցանիշների, այնպես էլ միկրոցուցանիշների կիրառությամբ	Եկամուտների առանձին տեսակների կանխատեսումների բազմաչափ մոդելների կիրառում, արդյունքների համադրում:

2.2 Միջինժամկետ հեռանկարը ծախսերի բյուջետավորման մեջ

Խնդիրը	Ներդրումների վերաբերյալ շատ որոշումներ հստակ չեն կապված ոլորտային ռազմավարությունների հետ, իսկ դրանց ընթացիկ ծախսերի կանխատեսումները միայն որոշ դեպքերում են ներառված պետական բյուջեի կանխատեսումների մեջ:		
Միջոցառումները	Խ/Խ	Միջոցառումը	Նկարագրությունը
	1	Պետական մարմինների աշխատակիցների կարողությունների բարձրացման նպատակով	Ապահովելու պետական մարմինների աշխատակիցների կարողությունները. - մշակելու բազմամյա միջնաժամկետ ռազմավարություններ ծրագրային բյուջետավորման (ԾԲ) նպատակներին համահունչ և ուղղակի արդյունքների

	վերապատրաստումների իրականացում	ամբողջական գնահատմամբ - ՄԺԾԾ-ի և տարեկան բյուջեի միջև կապերի հստակեցման ուղղությամբ:
--	-----------------------------------	--

2.3 Հարկաբյուջետային ռիսկերի հաշվետվողականություն

Խնդիրը	Վաղ փուլում բացահայտել տնտեսության առանձին ճյուղերում առաջացող հարկաբյուջետային ռիսկերը		
Միջոցառումները	h/h	Միջոցառումը	Նկարագրությունը
	1	Էներգետիկայի, ջրային տնտեսության և տրանսպորտի ոլորտների հետ կապված հարկաբյուջետային ռիսկերի բացահայտման և գնահատման համար մեթոդաբանական հիմքերի ստեղծում	ԱՄՀ-ի օժանդակությամբ Հարկաբյուջետային ռիսկերի գնահատման բաժնի ուժերով կմշակվի Էներգետիկայի, ջրային տնտեսության և տրանսպորտի ոլորտների հետ կապված հարկաբյուջետային ռիսկերի բացահայտման և գնահատման մեթոդաբանություն, որը հիմք կհանդիսանա բաժնի աշխատանքների իրականացման համար:
	2	Էներգետիկայի, ջրային տնտեսության և տրանսպորտի ոլորտների հետ կապված ֆիսկալ ռիսկերի բացահայտում և գնահատում	Ֆիսկալ ռիսկերի գնահատման բաժինը ստանում է Էներգետիկայի, ջրային տնտեսության և տրանսպորտի ոլորտների ընկերությունների ներառյալ պետական մասնակցությամբ ընկերությունների (անկախ պետական մասնակցության չափից), կարգավորվող հանրային ծառայություններ մատուցող ընկերությունների, պետական բյուջեից վարկեր (ենթավարկեր), երաշխիքներ կամ սուբսիդիաներ ստացող ընկերությունների, ինչպես նաև պետության հետ պետական-մասնավոր գործընկերության ծրագրերում (այդ թվում՝ կոնցեսիաներում) ներգրավված ընկերո- ւթյուններից հաշվետվություններ, կոնսոլիդացում է բացահայտված ռիսկերով պայմանավորված առաջացող խնդիրները և սահմանված կարգով ներկայացնում դրանք:

2.4 Հանրային ներդրումների կառավարում

Խնդիրը	Հանրային ներդրումների կառավարման արդյունավետության բարձրացման համար նախադրյալների ստեղծում		
Միջոցառումները	h/h	Միջոցառումը	Նկարագրությունը
	1	Ուղեցույցի մշակում	Ներդրումային ծրագրերի նախագծերի տնտեսական վերլուծության և առաջնահերթությունների սահմանման համար ուղեցույցների մշակում:
	2	Վերապատրաստում և կարողությունների զարգացում	Ներդրումային ծրագրերի նախագծերի տնտեսական վերլուծության և առաջնահերթությունների սահմանման տեխնիկաների և համակարգման զարգացման գծով ուսուցման նյութերի մշակում և վերապատրաստման ծրագրերի իրականացում:
	3	Ծրագրի տվյալների բազա	Ներդրումային ծրագրերի տվյալների բազայի ստեղծում, փորձարկում և գործադրում նոր ներդրումային ծրագրերի նախագծերի տնտեսական վերլուծության համար:
	4	Միասնական բյուջետավորում	Ներդրումային ծրագրերի նախագծերի ընթացիկ և կապիտալ ծախսերի միասնական բյուջետավորման մեթոդաբանության (ուղեցույցի) մշակում, փորձարկում և կիրառում:

3. Պետական գնումներ

Բարեփոխումները հիմնականում ուղղված կլինեն գնումների բողոքարկման համակարգի անկախության ապահովմանը, գնումների ոչ մրցակցային ձևերի կիրառության դեպքերի նվազեցմանը, գնումների գործընթացի ավտոմատացմանն ու գնումների գործընթացում ներգրավված անձնակազմի կարողությունների բարձրացմանը: Բարեփոխումների շրջանակներում առանձնակի ուշադրություն կդարձվի նաև գնումների մասին ՀՀ օրենսդրության համապատասխանեցմանը ՀՀ միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների պահանջներին:

3.1 Գնումների բողոքարկման համակարգ

Վերջին տարիներին հատկապես միջազգային դոնոր կազմակերպությունների և ՀՀ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից պարբերաբար հարցականի տակ է դրվել գնումների բողոքարկման ներկայիս համակարգի անկախությունն ու արդյունավետությունը: Բարձրացված խնդիրներն առնչվում են ինչպես ԳԲԽ-ի և հանձնաժողովների կազմերին (դրանցում մասնավոր հատվածի և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ոչ բավարար կամ ձևական ներկայացվածությանը), այնպես էլ խորհրդի գործառնական անկախությանը (խորհրդի քարտուղարության

գործառնությունների վերապահումը Գնումների աջակցության կենտրոն ՊՈԱԿ-ին, թուլացնում է խորհրդի և հանձնաժողովների գործառնական անկախությունը):

ԱՀԿ Համաձայնագրով սահմանում է, որ յուրաքանչյուր անդամ երկիր պետք է ստեղծի կամ նշանակի առնվազն մեկ վարչական կամ դատական մարմին, որը անկախ է պատվիրատուներից և կարող է մատակարարներից ստանալ և քննել բողոքներ, որոնք ծագել են գնումների ընթացակարգերի ժամանակ:

Խնդիրը	Գնումների բողոքարկման ներկայիս համակարգի անկախության ու արդյունավետության ապահովում		
Միջոցառումները	h/h	Միջոցառումը	Նկարագրությունը
	1	Գնումների բողոքարկման համակարգի վերանայում	Կիրականացվի Գնումների բողոքարկման համակարգի արդյունավետության համապարփակ ուսումնասիրություն, որը կընդգրկի Գնումների բողոքարկման խորհրդի կազմին, անկախությանն ու գործունեությանը ներկայացվող օրենսդրական և կանոնակարգային պահանջներն ու դրանց գործնականում ապահովման մակարդակը, Գնումների բողոքարկման խորհրդի կարողություններն, ինչպես նաև Գնումների աջակցման կենտրոնի գործառնությունների արդյունավետությունը՝ որպես Գնումների բողոքարկման խորհրդի քարտուղարության: Ուսումնասիրության արդյունքում կհստակեցվեն գնումների բողոքարկման համակարգում առկա խնդիրները և կմշակվեն առաջարկություններ այդ համակարգի արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Գնումների բողոքարկման համակարգի արդյունավետության համապարփակ ուսումնասիրության արդյունքներով կմշակվի համակարգի բարելավմանն ուղղված միջոցառումների ծրագիր, որն առնվազն կներառի օրենսդրական, ինստիտուցիոնալ, գործառնական և կարողությունների զարգացման հարցերը:

3.2 Գնումների ոչ մրցակցային ձևերի կիրառություն

Վերջին տարիներին արձանագրվել է գնումների ոչ մրցակցային ձևերի կիրառության դեպքերի աճ նախորդող տարիների համեմատ: Դա վերաբերվում է ինչպես գնումների ոչ մրցակցային ձևերի կիրառությամբ կնքված պայմանագրերի ընդհանուր թվաքանակին, այնպես էլ այդ գնումների ընդհանուր ծավալներին: Գնումների ոչ մրցակցային ձևերի կիրառության մեծ ծավալները բացասաբար են անդրադառնում գումների համակարգի ընդհանուր արդյունավետության վրա և բարձրացնում են կոռուպցիոն ռիսկերն ու ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործման հավանականությունը:

Խնդիրը	Գնումների ոչ մրցակցային ձևերի կիրառության ծավալների նվազեցում, գնումների համակարգի ընդհանուր արդյունավետության բարձրացում		
Միջոցառումները	h/h	Միջոցառումը	Նկարագրությունը
	1	Գնումների պլանավորման համակարգի արդյունավետության ուսումնասիրություն	Գնումների ոչ մրցակցային ձևերի լայն կիրառության պատճառներից մեկը գնումների պլանավորման համակարգի ցածր արդյունավետությունն է: Կուսումնասիրվի գնումների պլանավորման համակարգը, նպատակ ունենալով պարզել այդ համակարգի արդյունավետությունը և նվազագույնի հասցնելու գնումների պլանավորման թերություններով պայմանավորված գնումների ոչ մրցակցային ձևերի կիրառության դեպքերը: Կներկայացվեն առաջարկություններ գնումների պլանավորման համակարգի բարելավման ուղղությամբ:
	2	Գնումների պլանավորման համակարգի բարելավմանն ուղղված միջոցառումների ծրագրի հաստատում	Գնումների պլանավորման համակարգի ուսումնասիրության արդյունքներով կմշակվի համակարգի բարելավմանն ուղղված միջոցառումների ծրագիր, որն առնվազն կներառի օրենսդրական, ինստիտուցիոնալ, գործառնական և կարողությունների զարգացման հարցերը:
	3	Գնումների պլանավորման համակարգի բարելավում	Հաստատված միջոցառումների ծրագրին համապատասխան կիրականացվեն գնումների պլանավորման համակարգի բարելավմանն ուղղված աշխատանքներ:

3.3 Գնումների գործընթացի ավտոմատացում

Խնդիրը	Էլեկտրոնային գնումների համակարգը դեռևս չի ընդգրկում գնումների ողջ գործընթացը:		
Միջոցառումները	h/h	Միջոցառումը	Նկարագրությունը
	1	Էլեկտրոնային գնումների համակարգի ընդհանուր ֆունկցիոնալության բարելավում	Էլեկտրոնային գնումների համակարգի շրջանակներում գնումների գործընթացի բոլոր փուլերի ընդգրկման և ավտոմատացման նպատակով կիրականացվի գնումների պլանավորմանը, գնման պայմանագրերի կառավարմանը և գնումների հաշվետվությունների պատրաստմանն առնչվող ծրագրային մոդուլների ձեռք բերում և ներդրում:

3.4 Գնումների ոլորտում մասնագիտական կարողություններ

Խնդիրը	Գնումների համակարգողների մասնագիտական կարողությունները դեռևս բավարար չեն արդյունավետ կերպով ՀՀ օրենսդրությամբ սահմանված լիազորություններն իրականացնելու համար:		
Միջոցառումները	h/h	Միջոցառումը	Նկարագրությունը
	1	Գնումների ոլորտում վերապատրաստումների կարիքների գնահատում	Կիրականացվի գնումների համակարգողների վերապատրաստումների կարիքների գնահատում: Միջոցառման շրջանակներում կմշակվեն համապատասխան վերապատրաստման մոդուլներ և ծրագրեր:
	2	Գնումների ոլորտում վերապատրաստումների իրականացում	Գնումների համակարգողների կարողությունների բարձրացման նպատակով կիրականացվեն վերապատրաստումներ՝ մշակված մոդուլներին և ծրագրերին համապատասխան:

3.5 Գնումների մասին ՀՀ օրենսդրության համապատասխանեցում գնումների ոլորտում ՀՀ միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններին

2010թ.-ից ՀՀ-ն անդամակցել է Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) պետական գնումների համաձայնագրին, իսկ 2015թ. հունվարից՝ ԵՏՄ-ի համաձայնագրին, որոնց շրջանակներում որոշակի պարտավորություններ են ստանձնվել պետական գնումների ոլորտում:

Այդ առումով, անհրաժեշտություն է առաջացել Գնումների մասին ՀՀ օրենսդրությունը մոտարկել վերոհիշյալ երկու համաձայնագրերի պահանջներին:

Խնդիրը	Գնումների մասին ՀՀ օրենսդրության համապատասխանեցում գնումների ոլորտում ՀՀ միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններին		
Միջոցառումները	h/h	Միջոցառումը	Նկարագրությունը
	1	Գնումների մասին ՀՀ օրենսդրության մոտարկում ՀՀ միջազգային պայմանագրերի պահանջներին	Կուսումնասիրվի և կվերանայվի գնումների մասին ՀՀ օրենսդրությունը, այն մոտարկելով ԱՀԿ պետական գնումների վերանայված համաձայնագրի, ինչպես նաև ԵՏՄ համաձայնագրի պահանջների հետ:

4. Պետական ներքին ֆինանսական հսկողություն (ՊՆՖՀ)

2014 թվականի սեպտեմբերին պաշտոնապես մեկնարկել է ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող՝ Շվեդիայի Ազգային ֆինանսական կառավարման մարմնի կողմից իրականացվող Հայաստանի Հանրապետությունում պետական ներքին ֆինանսական հսկողության կարգավորիչ և ինստիտուցիոնալ շրջանակի ուժեղացման և նոր համակարգի գործարկման հարցում Կենտրոնական ներդաշնակեցման միավորին օժանդակության մասին Թվինինգ ծրագիրը, որը նպատակ ունի ԵՄ լավագույն փորձի հիման վրա զարգացնել ՀՀ պետական ներքին ֆինանսական հսկողության ոլորտը: Ծրագիրը իրականացվելու է մինչև 2016 թվականի սեպտեմբեր ամիսը:

Ծրագիրն իրականացվում է համապարփակ ՊՆՖՀ համակարգի կատարելագործման միջոցով՝ նկատի ունենալով, որ համակարգի երկու հիմնական բաղադրիչները՝ կառավարման բոլոր մակարդակներում հավուր պատշաճի հավաստիացում ապահովող ներքին աուդիտը և պետական ներքին ֆինանսական հսկողության հետ կապված հարաբերությունների կարգավորումն ապահովող ստանդարտներ սահմանող և դրանց մոնիթորինգն իրականացնող կենտրոնական ներդաշնակեցման միավորը ներդրված են:

4.1 Ֆինանսական կառավարում և հսկողություն (ՖԿՀ)

Հայաստանում ֆինանսական կառավարման և հսկողություն գործառույթները պատմականորեն վերաբերվել են ծախսված բյուջետային միջոցներն օրենսդրությամբ սահմանված նպատակների համապատասխանությունն ապահովելուն: Այս նպատակը կապահպանվի, սակայն ավելի մեծ շեշտադրումը կդրվի կառավարչական հաշվետվողականության վրա, որը ծրագրային/արդյունքների վրա հիմնված բյուջետավորման շրջանակներում համակարգը կդարձնի ավելի շատ արդյունքին ուղղված:

4.1.1 Ֆինանսական կառավարման և հսկողության համակարգի ներդրում

Բազմաթիվ օրենսդրական և ենթաօրենսդրական ակտեր են կարգավորում պետական ներքին ֆինանսական հսկողության համակարգի գործունեությունը², սահմանելով կառավարման կազմակերպական կառուցվածքները, կառավարչական հաշվետվողականության մեխանիզմները և այլն: Այդ օրենսդրական ակտերն ընդունվել են ժամանակի ընթացքում՝ ՊՖԿ առանձին տարրերի զարգացմանը զուգընթաց և կենտրոնանում են ֆինանսական կառավարման և հսկողության առանձին հարցերի վրա՝ երբեմն առանց հաշվի առնելու ՖԿՀ համակարգի ընդհանուր արդյունավետության և օգտավետության հարցերը: Այդ առումով, չկա պետական ֆինանսական կառավարմանն ու հսկողությանն առնչվող բոլոր խնդիրները համատեղող մեկ ընդհանուր օրենսդրություն:

Մյուս կողմից վերջին տարիներին ՊՖԿ ոլորտում իրականացվող որոշ բարեփոխումներ (օրինակ՝ Ծրագրային բյուջետավորման բարեփոխումները) լուրջ մարտահրավերներ են ստեղծում ՖԿՀ համակարգի նպատակների, բաղադրիչների և գործառույթների առումով:

Խնդիր	Ֆինանսական կառավարման ու հսկողության գործող օրենսդրության բացակայություն:		
	h/h	Միջոցառումը	Նկարագրությունը
Միջոցառումները	1	ՖԿՀ համակարգի ներդրման համար անհրաժեշտ մեթոդաբանության մշակում և ՀՀ կառավարության կողմից սահմանված հանրային հատվածի առնվազն երկու կազմակերպություններում պիլոտավորում	Կմշակվի ՖԿՀ համակարգի ներդրման համար անհրաժեշտ մեթոդաբանությունը, ընտրված հանրային հատվածի կազմակերպություններում կիրականացվի ՖԿՀ համակարգի ներդրման պիլոտավորում
	2	Մշակված և պիլոտավորված մեթոդաբանության արդյունքում ՖԿՀ հայեցակարգի և օրենքի նախագծերի վերանայում և հստակեցում	Մշակված և պիլոտավորված մեթոդաբանության արդյունքում կվերանայվեն և կբերվեն ավարտուն տեսքի ՖԿՀ հայեցակարգի և օրենքի նախագծերը, որոնցում կհստակեցվեն ՖԿՀ-ի հիմնական բաղադրիչները և ՀՀ-ում ժամանակակից ՖԿՀ համակարգի ներդրման առանձնահատկությունները:

² Բյուջետային համակարգի մասին ՀՀ օրենք, Գանձապետական համակարգի մասին ՀՀ օրենք, Ներքին աուդիտի մասին ՀՀ օրենք, Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մասին ՀՀ օրենք, Քաղաքացիական ծառայության մասին ՀՀ օրենք և այլն

	3	ՖԿՀ հայեցակարգի և ՖԿՀ մասին օրենքի նախագծերի հաստատում	ՖԿՀ հայեցակարգի և ՖԿՀ մասին օրենքի նախագծերը կներկայացվեն ՀՀ կառավարության հավանությանը
	4	ՖԿՀ մասին օրենքի ընդունում	ՖԿՀ մասին օրենքի նախագիծը կներկայացվի ՀՀ ԱԺ ընդունմանը (ըստ անհրաժեշտության օրենքից բխող՝ ՀՀ այլ օրենքներում փոփոխությունների և լրացումների վերաբերյալ օրենսդրական փաթեթի հետ միասին):
	5	ՖԿՀ օրենքի կիրարկման և ՖԿՀ համակարգի ներդրման միջոցառումների ծրագրի հաստատում և ՖԿՀ համակարգի գործնականում ներդրում ՀՀ հանրային հատվածի կազմակերպություններում	Կմշակվի և ՀՀ կառավարության հաստատմանը կներկայացվի ՖԿՀ օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ծրագիր (Ժամանակացույցը), որտեղ կներառվեն ՖԿՀ համակարգի գործնականում ներդրման համար անհրաժեշտ միջոցառումները, այդ թվում՝ ենթաօրենսդրության և մեթոդաբանության մշակմանը, կանոնակարգային, ինստիտուցիոնալ և կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումները:

4.2. Ներքին աուդիտ

Բարեփոխումներն ուղղված կլինեն Ներքին աուդիտի գործառույթների գործնական կիրառման կատարելագործմանը, այդ թվում տեխնիկական, մարդկային ռեսուրսների և աուդիտորների մասնագիտական կարողությունների և գործնական հմտությունների զարգացմանը: Ուշադրության կենտրոնում կլինի ներքին աուդիտի արդյունավետության մեծացմանն ուղղված հարցերը:

4.2.1 Ներքին աուդիտորների մասնագիտական կարողությունները

Ներքին աուդիտի համակարգը ներդրված է գրեթե բոլոր պետական մարմիններում և քաղաքային համայնքներում, սակայն ներքին աուդիտորների առկա կարողությունները հիմնականում չեն բավարարում ներքին աուդիտի մեթոդաբանությամբ սահմանված աշխատանքների արդյունավետ կերպով իրականացնելու համար:

Ներքին աուդիտի ստորաբաժանումները դեռևս շարունակում են գործարքների վրա հիմնված համապատասխանության աուդիտի իրականացումը: Մարդկային ռեսուրսների և մասնագիտական կարողությունների բացերով պայմանավորված, Ներքին աուդիտի ստանդարտներին ու ձեռնարկներին համապատասխան համակարգերի վրա հիմնված աուդիտ, որպես կանոն, չեն իրականացում:

Խնդիրը	Ներքին աուդիտորի մասնագիտական կարողությունները չեն համապատասխանում Ներքին աուդիտի ստանդարտներին և ՀՀ ներքին աուդիտի մասին օրենսդրության պահանջներին համապատասխան հավաստիացումներ տրամադրելու համար:		
Միջոցառումները	h/h	Միջոցառումը	Նկարագրությունը
	1	Հանրային հատվածում ներքին աուդիտորների կարողությունների համապարփակ գնահատում և կարողությունների զարգացման ծրագրի մշակում	Կգնահատվեն ներքին աուդիտի համակարգում առկա կարողությունները, այդ թվում՝ ներքին աուդիտորների թվաքանակի համապատասխանությունը ներքին աուդիտի սահմանված միջավայրին, ներքին աուդիտորների գիտելիքների և գործնական կարողությունների համապատասխանությունն աուդիտի ստանդարտների գործնականում կիրառության համար անհրաժեշտ մակարդակին: Կմշակվի միջոցառումների ծրագիր ուղղված առկա կարողությունների և ներքին աուդիտի միջավայրի համապատասխանեցմանը, ինչպես նաև ներքին աուդիտի մեթոդաբանության և դրա կիրառության համար աուդիտորների գործնական կարողությունների համապատասխանեցմանը: Նշված գնահատումներն ու միջոցառումների ծրագիրը կընդգրկեն նաև ներքին աուդիտի կենտրոնացված ներդաշնակեցման միավորը:
	2	Ներքին աուդիտորների շարունակական մասնագիտական վերապատրաստման ծրագրերի վերանայում, համապատասխանեցում միջազգային լավագույն փորձի պահանջներին	Կվերանայվեն շարունակական մասնագիտական վերապատրաստումների գործող ծրագրերը և օգտագործվող նյութերը՝ ավելի շատ ժամանակ և ուշադրություն հատկացնելով ներքին աուդիտորների գործնական կարողությունների զարգացման խնդրին:
	3	Ներքին աուդիտորների կարողությունների զարգացում	Հանրային հատվածում ներքին աուդիտորների կարողությունների համապարփակ գնահատման արդյունքում մշակված կարողությունների զարգացման, ինչպես նաև շարունակական մասնագիտական վերապատրաստման վերանայված ծրագրերին համապատասխան կիրականացվի ներքին աուդիտորների կարողությունների զարգացում և դրանց համապատասխանեցում աուդիտի միջավայրի պահանջներին:

4.2.2 Ներքին աուդիտի մեթոդաբանության վերանայում

Խնդիրը	Ներքին աուդիտի կատարողականի, բացահայտումներին վերաբերյալ ղեկավարության արդյունավետ արձագանքի, ներքին և արտաքին աուդիտի մարմինների համագործակցության և որոշակի այլ հարցերի գործընթացները սահմանող մեթոդաբանությունը չի ապահովում վերջիններիս արդյունավետ կերպով իրականացումը:		
Միջոցառումները	h/h	Միջոցառումը	Նկարագրությունը
	1	Աուդիտի կատարողականի հստակեցում՝ պլանավորված և փաստացի իրականացված աուդիտորական առաջադրանքների քանակի տարբերության նվազեցում	Կվերանայվի ներքին աուդիտի մասին օրենսդրությունը՝ ներքին աուդիտի տարեկան պլանի և փաստացի իրականացրած աուդիտորական առաջադրանքների քանակի տարբերությունը նվազեցնելու նպատակով:
	2	Աուդիտորական բացահայտումների վերաբերյալ ղեկավարության արձագանքի և վերստուգման գործընթացի շեշտադրում	Կվերանայվի ներքին աուդիտի մասին օրենսդրությունը՝ ներքին աուդիտի բացահայտումները, ղեկավարության արձագանքը, շտկման գործողությունների ծրագրերը և վերստուգման գործընթացները շեշտադրելու նպատակով:
	3	Ներքին աուդիտի իրականացման գործնական հարցերի շեշտադրում	Կվերանայվեն ներքին աուդիտի մասին օրենսդրությունը՝ շեշտը դնելով գործնական կիրառության հարցերի վրա: Կմշակվեն ուղեցույցներ և ձեռնարկներ (օրինակ կատարողական աուդիտի ձեռնարկ, առանձին համակարգերի աուդիտի ձեռնարկներ և այլն), որտեղ հիմնական ուշադրությունը կդարձվի ներքին աուդիտի ստանդարտների պահանջների գործնական կիրառության հարցերին:

	4	Ներքին և արտաքին աուդիտի համագործակցության ապահովում	Կվերանայվի ներքին աուդիտի մասին օրենսդրությունը՝ ներքին և արտաքին աուդիտի մարմինների համագործակցության ընթացակարգերն ավելի կիրառելի և արդյունավետ դարձնելու նպատակով:
	5	Ներքին աուդիտի կողմից աշխատավարձերի հաշվարկման և վճարման ներքին հսկողական համակարգերի արդյունավետության գնահատման առանձնահատկությունների սահմանում	Հանրային հատվածի կազմակերպություններում աշխատավարձերի նկատմամբ հսկողության արդյունավետության գնահատման նպատակով կմշակվի վերջիններիս վերաբերյալ ներքին աուդիտի կողմից ուսումնասիրությունների իրականացման ընթացակարգ:

5. Գանձապետական համակարգ՝ բյուջեների կատարման հաշվետվություններ

5.1. Արտաբյուջետային գործառնությունների վերաբերյալ հաշվետվությունների շրջանակը

Խնդիրը	ՀՀ Ազգային ժողով ներկայացվող պլանավորված և փաստացի հարկաբյուջետային հաշվետվություններում արտաբյուջետային գործառնությունների վերաբերյալ տեղեկատվությունը ամբողջությամբ ներառված չէ, որը հնարավորություն չի տալիս արտաբյուջետային հաշիվների եկամուտների և ծախսերի վերաբերյալ ստանալ ամբողջական տեղեկատվություն:		
	h/h	Միջոցառումը	Նկարագրությունը
	1	Հաշվետվություններում չարտացոլված արտաբյուջետային գործառնությունների նվազեցում	Կվերանայվեն պետական հիմնարկներից արտաբյուջետային գործառնությունների ֆինանսական տվյալների կանոնները, արտաբյուջետային գործառնությունների ֆինանսական տվյալները կգրանցվեն ՖՆ տվյալների բազայում, կիրականացվի պետական հիմնարկների ֆինանսական գործառնությունների մոնիտորինգ:
Միջոցառումները	2	Արտաբյուջետային գործառնությունների վերաբերյալ հաշվետվություններում ներառված ծախսերի,	Արտաբյուջետային ֆինանսական գործառնությունների (եկամուտներ և ծախսեր) պլանավորված և փաստացի արդյունքների վերաբերյալ հաշվետվությունների պատրաստման նպատակով պետական հիմնարկներից բոլոր արտաբյուջետային ֆինանսական

	եկանուտների և ֆինանսավորման վերաբերյալ մանրամասն տեղեկատվության ներկայացում	գործառնությունների վերաբերյալ կստացվեն մանրամասն տեղեկատվություն, կպատրաստվեն և կներկայացվեն ֆինանսական գործառնությունների փաստացի (ex-post) արդյունքների վերաբերյալ ընդգրկուն հաշվետվություններ:
--	---	---

6. Պետական կազմակերպությունների ֆինանսական կառավարում և հսկողություն՝ Պետական ոչ առևտրային կազմակերպություններ

Հայաստանում պետական հատվածի գործառնությունների ապակենտրոնացման գործընթացի շրջանակներում, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումից հետո, 2001 թվականից սկսած կրթական, առողջապահական, մշակութային և այլ բյուջետային հիմնարկների մեծ մասը վերակազմավորվեց ՊՈԱԿ-ների: Նշված գործընթացի առաջնային նպատակն էր ավելի մեծ ճկունություն ապահովել ծառայությունների մատուցման, եկամուտների ստացման և պետական հատվածի այն միավորների կառավարման խնդրում, որոնք անմիջական ծառայություններ են տրամադրում հանրությանը և բնորոշվում են համեմատաբար փոքր քաղաքական և ֆիսկալ ռիսկերով: Ունենալով իրավաբանական անձի կարգավիճակ՝ ՊՈԱԿ-ները ունեն կառավարչական և ֆինանսական հարցերում որոշումների կայացման զգալի ինքնուրույնություն: Իրենց կանոնադրություններով սահմանված լիազորությունների շրջանակներում, ՊՈԱԿ-ները կարող են իրականացնել նաև որոշակի առևտրային գործառնություններ և դրանց հաշվին ձևավորել եկամուտներ: ՊՈԱԿ-ների հաշիվները գտնվում են առևտրային բանկերում և իրենց ստանձնած ծախսային պարտավորությունների համար ՊՈԱԿ-ները կրում են ինքնուրույն պատասխանատվություն: «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի և մի շարք այլ իրավական ակտերի համաձայն՝ Լիազորված պետական մարմինն (ԼՄ) իրականացնում է պետական կազմակերպության՝ ՊՈԱԿ-ի ընդհանուր կառավարումը և ապահովում նրա բնականոն գործունեությունը: Ներկայումս ՀՀ-ում գործում են ավելի քան 1700 ՊՈԱԿ-ներ:

Սույն ոլորտի բարեփոխումները հիմնականում ուղղված կլինեն ՊՈԱԿ-ների ստեղծման և վերակազմավորման շուրջ որոշումների կայացման համար հիմնական չափորոշիչների մշակմանը և սահմանմանը, ինչպես նաև ՊՈԱԿ-ների ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ հաշվետվողականության և մոնիտորինգի մեխանիզմների արդյունավետության բարձրացմանը, որի համար հիմք կհանդիսանան նաև ՀԲ-ի աջակցությամբ ՀՀ ՖՆ-ի կողմից պիլոտային հիմունքով իրականացված ՊՈԱԿ-ների ֆիդուցիար հսկողության փորձնական ծրագրի ներդրման աշխատանքները:

6.1 ՊՈԱԿ-ների ստեղծման և վերակազմավորման շուրջ որոշումների կայացման համար հիմնական չափորոշիչները

Խնդիրը	ՊՈԱԿ-ների ստեղծման և վերակազմավորման որոշումների կայացման համար հստակ չափորոշիչներ դեռևս չեն սահմանվել, ինչը իր ազդեցությունը ունի այդ որոշումների արդյունավետության վրա: Ներկայումս վերոհիշյալ մեխանիզմները ամբողջականացման և կատարելագործման կարիք ունեն:		
Միջոցառումները	հ/հ	Միջոցառումը	Նկարագրությունը
	1	ՊՈԱԿ-ների ստեղծման և վերակազմավորման շուրջ որոշումների կայացման համար հիմնական չափորոշիչների ուսումնասիրություն	Նոր ՊՈԱԿ-ների ստեղծման կամ գործող ՊՈԱԿ-ների կարգավիճակի պահպանման մասին որոշումների կայացման նախկինում մշակված չափորոշիչների վերանայման և դրանց վերջնական տեսքի բերման նպատակով կիրականացվի ՊՈԱԿ-ների ստեղծման և վերակազմավորման շուրջ որոշումների կայացման համար անհրաժեշտ չափորոշիչների ուսումնասիրություն:
	2	ՊՈԱԿ-ների ստեղծման և վերակազմավորման շուրջ որոշումների կայացման համար հիմնական չափորոշիչների մշակում	Ուսումնասիրության արդյունքով կսահմանվեն ՊՈԱԿ-ների ստեղծման և վերակազմավորման շուրջ որոշումների կայացման համար հիմնական չափորոշիչներ: Ըստ անհրաժեշտության փոփոխություններ կիրականացվեն համապատասխան իրավական ակտերում:

6.2 ՊՈԱԿ-ների ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ հաշվետվողականություն և մոնիտորինգ

ՊՈԱԿ-ները՝ որպես պետական հատվածի միավորների մեծաքանակ խումբ՝ ելնելով դրանց չափերից, ռիսկայնության մակարդակից և կառավարման առանձնահատկություններից, ընդգրկում են գործունեության բազմաթիվ ոլորտներում, որոնց մեծ մասը հիմնականում գործում են կրթական, մշակութային, առողջապահական և սոցիալական ոլորտներում: ԼՄ-ները, իրենց հերթին, միմյանցից տարբերվում են իրենց լիազոր կառավարման ներքո գործող ՊՈԱԿ-ների քանակով և տեսակներով: Ներկայումս հաշվետվողականության և մոնիտորինգի նպատակով ՊՈԱԿ-ները ԼՄ-ին ներկայացնում են ծավալուն հաշվետվություններ: Առկա է նաև վերջիններիս և ՀՀ ՖՆ կողմից ՊՈԱԿ-ների գործունեության մոնիտորինգի իրականացման որոշակի պահանջներ: Սակայն վերոհիշյալ մեխանիզմները առավել արդյունավետ դարձնելու նպատակով անհրաժեշտ է կատարելագործել վերջիններիս հաշվետվողականության և մոնիտորինգի համակարգը:

Խնդիրը	ՊՈԱԿ-ների գործունեության մոնիտորինգի իրականացման մեխանիզմների արդյունավետության բարձրացման անհրաժեշտություն
--------	---

Միջոցառումները	h/h	Միջոցառումը	Նկարագրությունը
	1	Բարելավման նպատակով ներկայիս գործող ՊՈԱԿ-ների ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ հաշվետվողականության և մոնիտորինգի մեխանիզմների ուսումնասիրություն	Կուսումնասիրվեն ՊՈԱԿ-ների ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ հաշվետվողականության և մոնիտորինգի գործող մեխանիզմները և ըստ անհրաժեշտության կմշակվեն դրանց բարելավման ուղղված միջոցառումներ (ներառյալ ձևաչափերը):
	2	Ավտոմատացման նպատակով ՊՈԱԿ-ների ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ հաշվետվությունների կազմման, ներկայացման, վերլուծության և ամփոփման գործընթացների տեխնիկական առաջադրանքի մշակում	Տեխնիկական առաջադրանքի մշակման շրջանակներում կուսումնասիրվեն ՊՈԱԿ-ների ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ հաշվետվությունների կազմման, ներկայացման, վերլուծության և ամփոփման գործընթացների միասնական էլեկտրոնային համակարգի ֆունկցիոնալությունը և կիրառությունը:
	3	ՊՈԱԿ-ների ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ հաշվետվությունների կազմման, ներկայացման, վերլուծության և ամփոփման գործընթացների ավտոմատացում	Մշակված տեխնիկական առաջադրանքի հիման վրա կիրականացվի գործընթացների ավտոմատացում:

7. Հանրային հատվածի հաշվապահական հաշվառում

2014թ. ՀՀ ԱԺ-ի կողմից ընդունվել է «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքը, որի նպատակը ՀՀ հանրային հատվածի կազմակերպություններում միջազգային չափանիշներին համապատասխանող հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրումն է: Օրենքով նախատեսվում է գործող հաշվապահական հաշվառման համակարգից անցում կատարել հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային չափանիշներին համապատասխան համակարգի, որը համահունչ և համադրելի կլինի ԱՄՀ-ի կողմից հաստատված՝ Կառավարության ֆինանսական վիճակագրության 2001թ. ձեռնարկի և ՀՀ մասնավոր հատվածում ներդրված հաշվապահական հաշվառման ստանդարտներին:

Հանրային հատվածի առանձին կազմակերպություններում հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրումը և դրանից հետո համախմբված ֆինանսական հաշվետվությունների ստացումը կապահովի նաև «Տարեկան ֆինանսական հաշվետվությունների որակն ու համապատասխանությունը սահմանված ժամկետներին» կատարողական ցուցանիշի գնահատականի բարձրացում

7.1 Հանրային հատվածի առանձին կազմակերպություններում նոր համակարգ

Հանրային հատվածի կազմակերպությունների կողմից հանրային հատվածի հաշվապահական հաշվառման նոր համակարգին անցումն իրականացվելու է 2015-2018թթ ընթացքում՝ սահմանված ժամանակացույցին համապատասխան:

Խնդիրը	Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման նոր համակարգի դեռևս ներդրված չէ հանրային հատվածի բոլոր կազմակերպություններում		
Միջոցառումները	h/h	Միջոցառումը	Նկարագրությունը

	1	Հանրային հատվածի առանձին կազմակերպություններում նոր համակարգի ներդրում	Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման (ՀՀՀՀ) նոր համակարգի ներդրում՝ սահմանված ժամանակացույցին համապատասխան: 2016թ. ՀՀՀՀ նոր համակարգի ներդրումը կիրականացվի թվով 16 պետական կառավարչական հիմնարկներում և նրանց ենթակա ՊՈԱԿ-ներում: 2017-2018թթ. կշարունակվի նոր համակարգի ներդրման աշխատանքները, միաժամանակ կուսումնասիրվի նախկին կազմակերպություններում ներդրման հետևանքով առաջ եկած խնդիրները, դրանց համապատասխան լուծումներ տալու նպատակով: Անհրաժեշտության դեպքում իրավական կարգավորումներ պահանջող խնդիրներին լուծում տալու համար կմշակվեն համապատասխան իրավական ակտեր (հրահանգներ, մեթոդական ցուցումներ): Կիրականացվի համապատասխան մասնագետների վերապատրաստումներ, որը հնարավորություն կընձեռի պատշաճ կարգով և ժամկետներում իրականացնելու նախատեսվող աշխատանքները:
--	---	--	---

7.2 Համախմբված ֆինանսական հաշվետվություններ

Կազմակերպություններում նոր համակարգի ամբողջական ներդրումից հետո իրականացվելու է ֆինանսական հաշվետվությունների համախմբում, որի արդյունքը Հայաստանի Հանրապետության՝ որպես մեկ տնտեսական միավորի, ֆինանսական հաշվետվությունները ստանալն է: Այդ նպատակով անհրաժեշտություն է առաջանում մշակել կամ ձեռք բերել համապատասխան միասնական հաշվապահական ծրագիր, ինչպես նաև մշակել իրավական ակտեր, որոնց օգնությամբ հնարավոր կլինի իրականացնել ինչպես տարբեր վերահսկման մակարդակներում, այնպես էլ պետության մակարդակով ֆինանսական հաշվետվությունների համախմբումը: Միաժամանակ անհրաժեշտ է իրականացնել համախմբված հաշվետվություններ պատրաստող մասնագետների վերապատրաստումներ, այդ թվում նաև պետության ֆինանսական հաշվետվությունները պատրաստող մասնագետների ուսուցում և վերապատրաստում:

Խնդիրը	Համախմբված ֆինանսական հաշվետվություններ ստանալու նպատակով միասնական հաշվապահական ծրագրի ձեռքբերման, ինչպես նաև իրավական ակտերում փոփոխություններ իրականացնելու անհրաժեշտություն		
Գաղափար	հ/հ	Միջոցառումը	Նկարագրությունը

	1	Համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստում	Հանրային հատվածի առանձին կազմակերպություններում հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրումից հետո համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու նպատակով կմշակվի կամ ձեռք կբերվի համապատասխան միասնական հաշվապահական ծրագիր, կմշակվեն իրավական ակտեր, որոնց օգնությամբ հնարավոր կլինի իրականացնել ինչպես տարբեր վերահսկման մակարդակներում, այնպես էլ պետության մակարդակով ֆինանսական հաշվետվությունների համախմբումը: Միաժամանակ կիրականացվեն համախմբված հաշվետվություններ պատրաստող մասնագետների վերապատրաստումներ, այդ թվում նաև պետության ֆինանսական հաշվետվությունները պատրաստող մասնագետների ուսուցում և վերապատրաստում:
--	---	---	---

7.3 Հանրային ակտիվների կառավարում

Հանրային ակտիվների և դրանց օգտագործման հաշվառումը հաշվեգրման հիմունքներով հանրային ակտիվների կառավարման հիմնական հատկանիշներից է: Այս բաղադրիչի ընդգրկումը շատ կարևոր է, քանի որ այն պետական ծախսերի ֆինանսական հաշվետվողականության ապահովման համար նոր ցուցանիշ է, և սերտորեն կապված է հաշվեգրման հիմունքներով հաշվապահական հաշվառման ներդրման հետ:

Խնդիրը	Պետական ծախսերի ֆինանսական հաշվետվողականության ապահովման նպատակով հանրային ակտիվների և դրանց օգտագործման հաշվառման անհրաժեշտություն		
Միջոցառումները	h/h	Միջոցառումը	Նկարագրությունը
	1	Կառավարության ֆինանսական ակտիվների մոնիտորինգ	Կմշակվի ակտիվների կառավարման մասին օրենսդրական ակտեր (ակտիվների ռեգիստրների և մոնիտորինգի ընթացակարգեր), կիրականացվեն ակտիվների կառավարման տեխնիկաների գծով վերապատրաստումներ: Կմեկնարկվեն ֆինանսական ակտիվների ռեգիստրների պատրաստման աշխատանքները, կներկայացվի ակտիվների մոնիտորինգի վերաբերյալ հաշվետվություն:

	2	Կառավարության ոչ ֆինանսական ակտիվների մոնիտորինգ	Կմշակվի ակտիվների ռեգիստրների և մոնիտորինգի ընթացակարգեր, ըստ անհրաժեշտության կատարաստվեն հաշվետվություններ, կիրականացվի ակտիվների կառավարման տեխնիկաների գծով աշխատակազմի վերապատրաստում:
	3	Ոչ ֆինանսական ակտիվների վաճառքի, փոխանցման և օտարման գործընթացի և դրանց օգտագործման իրավունքի թափանցիկություն	Օրենսդրությամբ կսահմանվեն ոչ ֆինանսական ակտիվների վաճառքի, փոխանցման և օտարման ընթացակարգերը և դրանց օգտագործման իրավունքները, ակտիվների օտարման տեխնիկաների գծով կիրականացվի աշխատակազմի վերապատրաստում:

8. Կորպորատիվ հաշվապահական հաշվառում և աուդիտ

8.1 Կորպորատիվ ֆինանսական հաշվետվողականության և աուդիտի օրենսդրական շրջանակի բարելավում և ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդում

ՀՀ-ում կորպորատիվ ֆինանսական հաշվետվողականության խթանման նպատակով 2014թ. ՀՀ ՖՆ-ի և ՀԲ-ի հետ համատեղ մշակվել է Երկրի ռազմավարությունը և Գործողությունների ծրագիրը (ԵՌԳԾ), որն իրենից ներկայացնում է բարեփոխման համապարփակ ծրագիր՝ առաջիկա ութ տարիների համար (2015-2022թթ.): ԵՌԳԾ-ն մշակվել է ՀՀ-ում կորպորատիվ հաշվետվողականության և աուդիտի գծով հիմնական շահագրգիռ կողմերի հետ քննարկումներից և աշխատանքային հանդիպումներից հետո, և հիմնվում է ՀՀ-ի համար մշակված և 2008թ-ի հունիսին հրապարակված ՀԲ «Հաշվապահական հաշվառման և աուդիտի ստանդարտների և կանոնների պահպանման հաշվետվության» (ՀՀԱԱ ՍԿՊՀ) շրջանակներում ներկայացված խորհուրդ-առաջարկների վրա:

Գործողությունների ծրագիրը ներառում է չորս հիմնական ոլորտ, որոնց բարեփոխման ուղղությամբ աշխատանքներ են նախատեսվում իրականացնել 2015-2022թթ ընթացքում՝

1. Հաշվապահական և աուդիտի կրթության ամրապնդում,
2. Կորպորատիվ ֆինանսական հաշվետվողականության կարևորության մասին հանրային իրազեկման բարձրացում,
3. Նորմատիվ-իրավական շրջանակի հետագա բարելավում:
4. Ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդում:

Նորմատիվ-իրավական շրջանակի հետագա բարելավման հետ կապված մշակվել է հաշվապահական հաշվառման և աուդիտ ոլորտների կարգավորման նոր օրենսդրական փաթեթ, որը ներառում է՝ «Հաշվապահական հաշվառման մասին», «Աուդիտորական գործունեության մասին» և «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» նոր ՀՀ օրենքների նախագծեր:

Խնդիրը	Կորպորատիվ հաշվապահական հաշվառման և աուդիտի կրթության, ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդման, կորպորատիվ ֆինանսական հաշվետվողականության կարևորության մասին հանրային իրազեկման բարձրացման, նորմատիվ-իրավական շրջանակի հետագա բարելավման անհրաժեշտություն:		
Միջոցառումները	h/h	Միջոցառումը	Նկարագրությունը
	1	Կորպորատիվ ֆինանսական հաշվետվողականության և աուդիտի նորմատիվ-իրավական շրջանակի հետագա բարելավում	ՀԲ աջակցությամբ մշակված «Հաշվապահական հաշվառման մասին», «Աուդիտորական գործունեության մասին» օրենքներում առաջադրվող փոփոխությունները և «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» նոր ՀՀ օրենքի նախագծերը հնարավորություն կտան արդյունավետ կերպով բաշխել ոլորտների կարգավորման և հանրային վերահսկողության գծով պարտականությունները մասնագիտացված կառույցի և պետության միջև: Առաջարկվող օրենսդրական փաթեթը նախատեսում է՝ • Հանրային վերահսկողության խորհրդի (ՀՎԽ) և Հաշվապահների ու աուդիտորների պալատի ստեղծում, • Հանրային վերահսկողության խորհրդի և Պալատի դերերի և պարտականությունների սահմանում, • ՖՆ-ի, ՀՎԽ-ի և Պալատի պարտականությունների և իրավունակության շրջանակների պարզաբանում:
	2	Կորպորատիվ ֆինանսական հաշվետվողականության կարևորության հանրային իրազեկում	ՀՀ-ում կորպորատիվ հաշվետվողականության շահագրգիռ կողմերը լավ չեն ընկալում և գնահատում բարձրորակ ֆինանսական հաշվետվողականության, աուդիտի և կորպորատիվ կառավարման օժանդակությամբ ստացվող որակյալ ֆինանսական հաշվետվությունների հանրային կարևորությունը: Առկա է թյուրընկալում՝ մասնավորապես ՖՀՄՍ-ների և ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի հաշվետվությունների նպատակների և այլն նպատակներով ներկայացվող հաշվետվությունների միջև, ինչպես օրինակ՝ հարկային հաշվետվությունների: Լավ մշակված և իրականացված հանրային իրազեկման ծրագիրը կբարձրացնի հանրային ընկալումը կորպորատիվ ֆինանսական բարձրորակ ֆինանսական հաշվետվողականության և աուդիտի օգուտների մասին և կավելացնի բարձրորակ կորպորատիվ հաշվետվողականության և աուդիտի նկատմամբ պահանջարկը

	3	Ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդում	Հանրային վերահսկման ներդրումը ՀՀ-ում լուրջ մարտահրավեր կհանդիսանա, որի ամենաարդյունավետ լուծումը կլինի վերահսկման համակարգի մշակումը: Կստեղծվի Հանրային վերահսկման խորհուրդ, որը աջակցության և ամրապնդման անհրաժեշտություն կունենա: Չնայած որոշ պարտականություններ հետագայում կպատվիրակվեն, սակայն ՖՆ-ն կշարունակի էական դերակատարություն ունենալ հաշվապահական հաշվառման և աուդիտի կարգավորման իմաստով: Վերջինիս պարտականությունները արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ են համապատասխան և պատշաճ հմտություններ, վերապատրաստում, ռեսուրսներ և ենթակառուցվածք: 2008թ-ի ՀՀԱԱ ՍԿՊՀ-ի խորհուրդ-առաջարկների համաձայն՝ ՖՆ-ում նաև հետագա կարողությունների զարգացում անհրաժեշտություն կլինի:
--	---	--	---

9. Պետական եկամուտների քաղաքականության մշակում

9.1 Եկամուտների վարչարարության համապատասխանություն

Համաշխարհային բանկն այժմ իրականացնում է Հարկային վարչարարության արդիականացման ծրագիր, որը հիմնականում ուղղված է միջազգային ժամանակակից համակարգչային ծրագրային ապահովման ներդրման շարունակությանը: ԱՄՆ ՄՋԳ-ն նույնպես իրականացնում է Հարկային բարեփոխումների ծրագիր, որը ուղղված է հարկային քաղաքականությունների և վարչական ընթացակարգերի բարելավմանը, ինչպես նաև ինստիտուցիոնալ զարգացմանը: Պետք է իրականացնել նաև հարկային օրենսդրության համապարփակ և համախմբված վերանայում:

Խնդիր	Հարկային օրենսդրության, հարկային վարչարարության ընթացակարգերի բարելավման, հարկ վճարողների սպասարկման որակի բարձրացման ապահովման անհրաժեշտություն		
Միջոցառումները	h/h	Միջոցառումը	Նկարագրությունը
	1	Հարկային օրենսդրության միասնականացում և պարզեցում	Հարկային օրենսդրության պարզեցում, համախմբում, հարկային օրենսդրության և հարկային համակարգի կայունության ու կանխատեսելիության ապահովում:
	2	Հարկային վարչարարության	Ինքնագնահատման համակարգի կատարելագործում:

	ընթացակարգերի պարզեցում	
3	Հարկ վճարողի հարկային պարտավորությունների ցուցադրման համակարգի ներդրում	Հարկ վճարողի պարտավորությունների մասին տեղեկատվության տրամադրման ավտոմատ համակարգի առկայություն:
4	Հարկ վճարողներին սպասարկման ծառայությունների որակի գնահատման համակարգի ներդրում	Հարկ վճարողներին տեղեկությունների ժամանակին և պատճաշ տրամադրում:
5	Հարկերի վճարման էլեկտրոնային համակարգի գործարկում	Հարկային պարտավորությունների կատարման համար պահանջվող ռեսուրսների կրճատում
6	Երրորդ անձանցից տեղեկությունների ստացման և արդյունավետ օգտագործման հնարավորությունների ընդլայնում	Հարկային հսկողության մեխանիզմների կատարելագործում:
7	Ռիսկերի վրա հիմնված հարկային հսկողության մեխանիզմների կատարելագործում և ռիսկային հարկ վճարողների նկատմամբ թիրախային հսկողություն	Ռիսկերի վրա հիմնված հարկային հսկողություն:
8	Ապառքների նվազեցմանն ուղղված վարչարարության գործիքների արդյունավետ կիրառում	Ապառքների կառավարման համակարգի կատարելագործում:

10. Արտաքին վերահսկողություն և օրենսդրական հսկողություն

Սույն ռազմավարության այս հատվածի միջոցառումներն իրականացնող երկու մարմիններն են ՀՀ ԱԺ-ն և ՀՀ ՎՊ-ն: Այս մարմինները անկախ պետական մարմիններ են, ինչը ամրագրված է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ օրենքներով և միջազգային ստանդարտներով: Նրանք անկախ են գործադիր իշխանությունից և պետական մյուս մարմիններից: ՀՀ ՎՊ-ի զարգացման ռազմավարությունը պետք է համահունչ լինի Հայաստանի Հանրապետությունում իրականացվող համապատասխան քաղաքականության դրույթներին:

ՀՀ արտաքին պետական վերահսկողության համակարգի բարեփոխումների և զարգացման ծրագրերի իրագործման ընթացքում Վերահսկիչ պալատը սերտորեն համագործակցում է ինչպես ՀՀ ԱԺ-ի, այնպես էլ՝ ՀՀ կառավարության հետ: Ուստի հաշվի առնելով այս մարմինների կենսական դերը հանրային ֆինանսների կառավարման համակարգում ՀՀ կառավարությունը ակնկալում է վերջիններիս համագործակցությունը Հայաստանում պետական ֆինանսների կառավարման կայացման գործընթացում:

Վերահսկիչ պալատը ՀՀ աուդիտի բարձրագույն ինստիտուտն է և, որը իր տարեկան և ընթացիկ հաշվետվությունները, եզրակացությունները վերահսկիչ պալատի խորհրդի կողմից հաստատվելուց հետո՝ տասն օրվա ընթացքում, ներկայացնում է Ազգային ժողով, դրանց մասին տեղեկացնելով Հայաստանի Հանրապետության Նախագահին և ՀՀ կառավարությանը, ինչպես նաև 30 օրվա ընթացքում դրանք տեղադրում է ՀՀ ՎՊ-ի ինտերնետային էջում:³

ՀՀ կառավարության գործունեության արտաքին վերահսկողության ոլորտում **ՀՀ Ազգային ժողովի** դերի բարձրացման նպատակով ԳՄՀԸ-ն աջակցություն է տրամադրել բյուջեի խորհրդարանական վերահսկողության հզորացման գործընթացի և Բյուջետային գրասենյակի հիմնադրման համար: Այս ծրագիրը շարունակվելու է մինչև 2017 թվականի մարտ ամիսը: 2015 թվականի մարտին «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքում կատարվել են համապատասխան փոփոխություններ, որտեղ սահմանվել են դրույթներ կապված Բյուջետային գրասենյակի ստեղծման և գործունեության հետ: Հաստատվել են նաև Բյուջետային գրասենյակի (փորձագետների աշխատանքային խմբի) կանոնակարգը և Բյուջետային գրասենյակի փորձագետներին ներկայացվող պահանջների, նրանց ընտրության (նշանակման) կարգը ու վարձատրության չափը⁴: Բյուջետային գրասենյակի ստեղծումը հնարավորություն է տալիս ՀՀ ԱԺ-ին օպերատիվ կերպով արձագանքելու բյուջեի կատարման ընթացքում առաջ եկած խնդիրներին և էական շեղումներին: Դեռևս աշխատանքներ պետք է իրականվեն Բյուջետային գրասենյակի գործառույթների իրականացման, գրասենյակի կայացման հարցում:

³ Վերահսկիչ պալատի մասին ՀՀ օրենք, 32-րդ հոդված, 3-րդ կետ

⁴ Տե՛ս «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 1-ին և 2-րդ հավելվածները

10.1 Տարեկան բյուջեի մասին օրենքի նախագծի ուսումնասիրություն

Խնդիրը	Աժ կողմից տարեկան բյուջեի մասին օրենքի նախագծի ուսումնասիրության, բյուջեի կատարման ընթացքում արդյունավետության մոնիտորինգ իրականացնելու, ինչպես նաև Բյուջետային գրասենյակի կարողությունների զարգացման անհրաժեշտություն:		
Միջոցառումները	h/h	Միջոցառումը	Նկարագրությունը
	1	Արտաքին վերահսկողության ապահովում (Տարեկան բյուջեի և ՎՊ-ի հաշվետվություններ)	Կիրականացվեն միջոցառումներ Աժ-ի տարեկան բյուջեի նախագծերի և ՎՊ-ի տարեկան և ընթացիկ հաշվետվություններում արձանագրված խնդիրների վերացման նկատմամբ վերահսկելու կարողությունները զարգացնելու ուղղությամբ, կմշակվի և կընդունվի Աժ կողմից ուսումնասիրման արդյունավետության մոնիտորինգ իրականացնելու վերաբերյալ իրավական ակտ, կիրականացվի ուսումնասիրման արդյունավետության մոնիտորինգ
Միջոցառումները	2	Բյուջետային գրասենյակի կարողությունների զարգացում	Կշարունակվի Բյուջետային գրասենյակի ձևավորման գործընթացը, կիրականացվի Բյուջետային գրասենյակի ներքին վերլուծական կարողությունների զարգացում, Բյուջետային գրասենյակը կունենա բոլոր անհրաժեշտ գործիքները իր գործառնություններն իրականացնելու համար:

10.2 ԱԲԻ (Աուդիտի բարձրագույն ինստիտուտ) անկախությունը և կառավարության տարեկան ֆինանսական հաշվետվությունների արտաքին աուդիտը

Սույն բաղադրիչով ներկայացված կատարողականի ցուցանիշը բարելավվել է հիմնականում վերջին սահմանադրական փոփոխությունների և «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի արդյունքում (ՎՊ-ի ավելի մեծ անկախության շնորհիվ): Գրանցվել է առաջընթաց աուդիտի առաջարկությունների իրականացման ուղղությամբ: Սակայն թափանցիկություն ապահովելու նպատակով հանրային միջոցների օգտագործման ուղղությամբ արտաքին աուդիտի բարձրորակ ծառայությունների մատուցումը դեռևս չի գտնվում բավարար մակարդակի վրա:

Խնդիրը	Հանրային միջոցների օգտագործման ուղղությամբ թափանցիկություն ապահովման, արտաքին աուդիտի բարձրորակ ծառայությունների մատուցման մակարդակի բարձրացման անհրաժեշտություն:		
ոցառումներ	h/h	Միջոցառումը	Նկարագրությունը

	1	Ընդհանուր (համակողմանի) ռազմավարություն	Իրավական և ինստիտուցիոնալ բարեփոխումներ՝ կվերանայվեն Վերահսկիչ պալատի մասին օրենքը և այլ իրավական ակտերը Աուդիտի բարձրագույն ինստիտուտի գործունեության միջազգային ստանդարտներին համապատասխանելու նպատակով (ISSAI, 10 և 20): Կներդրվեն Աուդիտի բարձրագույն ինստիտուտի գործունեության միջազգային ստանդարտներ:
	2	Ֆինանսական աուդիտներ	Աուդիտի կենթարկվեն Կառավարության բոլոր ֆինանսական հաշվետվությունները:
	3	Համապատասխանության աուդիտներ	Կառավարության բոլոր համակարգերի նկատմամբ պարբերաբար կիրականացվեն ամբողջական համապատասխանության աուդիտ:
	4	Կատարողականի աուդիտներ	Աուդիտի բարձրագույն ինստիտուտի գործունեության միջազգային ստանդարտներին համահունչ կզարգացվի կատարողականի աուդիտի շրջանակը և խորությունը:

10.3 Արտաքին աուդիտի հաշվետվությունների ուսումնասիրում օրենսդիր մարմնի կողմից

Խնդիրը	Արտաքին աուդիտի հաշվետվությունների ուսումնասիրության արդյունավետության բարձրացման նպատակով Ազգային ժողովի պատգամավորներին, մշտական հանձնաժողովներին, խմբակցություններին, պատգամավորական խմբերին մասնագիտական աջակցություն և տեղեկատվություն տրամադրելու նպատակով անհրաժեշտ է ունենալ որակավորված փորձագետների աշխատանքային խումբ՝ Բյուջետային գրասենյակ, որը կապահովի տարեկան պետական բյուջեի, ինչպես նաև ՎՊ-ի կողմից ներկայացված հաշվետվությունների ուսումնասիրություն և կներկայացնի մասնագիտական եզրակացություններ դրանց վերաբերյալ:		
	Միջոցառումները	h/h	Միջոցառումը

	1	Արտաքին աուդիտի հաշվետվությունների օրենսդրական ուսումնասիրություն	Կիրականացվի Բյուջետային գրասենյակի ձևավորում, փորձագետների ընտրություն, վերապատրաստում, Բյուջետային գրասենյակը իր գործառնությունների շրջանակներում Ազգային ժողովի կանոնակարգով սահմանված դեպքերում և ընթացակարգերով, պատգամավորներին, մշտական հանձնաժողովներին, խմբակցություններին, պատգամավորական խմբերին կտրամադրի մասնագիտական աջակցություն և տեղեկատվություն: Կիրականացվի Բյուջետային գրասենյակի կարողությունների զարգացում, կապահովի տարեկան բյուջեի նախագծի ավելի արդյունավետ ուսումնասիրություն: Տարեկան ֆինանսական հաշվետվությունների մասին կիրականացվի ՎՊ զեկույցների ավելի արդյունավետ ուսումնասիրություն:
--	---	---	--

10.4 Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային ոլորտի մշտական հանձնաժողովի միջոցով Ազգային ժողովի բարելավված վերահսկողություն

Խնդիրը	ՀՀ ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային ոլորտի մշտական հանձնաժողովը իր ոլորտի օրենքների կարգավորումների և փաստացի իրավիճակի գնահատման կարիք ունի: Բյուջետային գրասենյակը կարիք ունի իր գործունեության ոլորտում առկա խնդիրներին, դրանց լուծումներին և միտումներին առավել մոտիկից ծանոթանալու համար կապեր հաստատել այլ երկրների զարգացած Խորհրդարանական Բյուջետային Գրասենյակների հետ, ինչպես նաև միանալու Խորհրդարանական Բյուջետային Գրասենյակների համաշխարհային և Տնտեսական Համագործակցության և Զարգացման Կազմակերպության (ՏՀԶԿ) երկրների գլոբալ ցանցին:		
Միջոցառումները	h/h	Միջոցառումը	Նկարագրությունը

	1	Ազգային ժողովի արդյունավետ վերահսկողություն	Կիրականացվի ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային ոլորտի մշտական հանձնաժողովի կողմից իր ոլորտի օրենքների կարգավորումների և փաստացի իրավիճակի համեմատականների մոնիթորինգ, ուսումնասիրություններ, վերլուծություններ: Բյուջետային գրասենյակի գործունեության ոլորտում առկա խնդիրներին, դրանց լուծումներին և միտումներին առավել մոտիկից ծանոթանալու նպատակով այլ երկրների զարգացած խորհրդարանական Բյուջետային Գրասենյակների հետ կհաստատվեն կապեր: Կիրականացվի միացում խորհրդարանական Բյուջետային Գրասենյակների համաշխարհային և ՏՀԶԿ երկրների գլոբալ ցանցին: Տեղի կունենան՝ • փոխայցելություններ այլ երկրների զարգացած բյուջետային գրասենյակներ և հակառակը, • տեղեկատվության փոխանակում, • մասնակցություններ բյուջետային գրասենյակների ներկայացուցիչների հանդիպումներին և համաժողովներին:
--	---	---	---

11. Կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգ (ԿՖԿՏՀ)

Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի (Ծրագիր) շրջանակներում նախատեսված է իրականացնել Հայաստանում ԿՖԿՏՀ-ի ստեղծման և ներդրման աշխատանքները: ՀԲ կողմից տրամադրված TF 012529 դրամաշնորհի շրջանակներում կազմակերպված մրցույթի արդյունքներով ընտրվել է խորհրդատվական կազմակերպություն՝ ԿՖԿՏՀ ստեղծման և ներդրման նախապատրաստական աշխատանքներին աջակցելու նպատակով:

Խորհրդատվական կազմակերպության կողմից մշակվել և ՀՀ ՖՆ է ներկայացվել ԿՖԿՏՀ-ի մանրամասն տեխնիկական և գործառության բնութագիրը և դրա հիման վրա իրականացված անհրաժեշտ ֆինանսական միջոցների մանրամասն հաշվարկը, որը կազմում է 15.4 մլն. ԱՄՆ դոլար:

ԿՖԿՏՀ-ի ներդրման ընդհանուր նպատակը պետական հատվածի բարեփոխումների և ֆինանսական համակարգի գործողությունների հաշվառման և հաշվետվողականության թափանցիկության, ինչպես նաև հանրային ծառայությունների մատուցման արդյունավետության

բարձրացման նպատակաուղղված աջակցումն է՝ հանրային հատվածի կազմակերպությունների ամբողջական ֆինանսական տեղեկատվության համախմբման, տեղեկատվության համապարփակ փոխանակման. ինչպես նաև տեղեկատվության փոխադարձ ինտեգրման միջոցով:

Առաջադրվող ԿՖԿՏՀ-ի նպատակն է ավտոմատացնել կառավարման տարբեր մակարդակներում պետական ֆինանսների կառավարման հետ կապված գործընթացները և ապահովել գործարքների արդյունավետությունը և թափանցիկությունը: Ավելին, համակարգի ներդրումը հնարավորություն կընձեռի ապահովել ֆինանսական տեղեկատվության ավտոմատ կառավարումը պետական հատվածի բոլոր մակարդակներում, այդ թվում բյուջեի պլանավորում, բյուջեի կատարում, գնումներ, հաշվապահական հաշվառում, հաշվետվություններ և աուդիտ:

Վերոնշյալով պայմանավորված Համաշխարհային բանկի TF 012529 դրամաշնորհային ծրագրի շրջանակում մշակվել է ԿՖԿՏՀ-ի տեխնիկական առաջադրանքը:

Խնդիրը	Կառավարման տարբեր մակարդակներում պետական ֆինանսների կառավարման հետ կապված գործընթացների ավտոմատացման և գործարքների արդյունավետության ու թափանցիկության ապահովման անհրաժեշտություն:		
Միջոցառումները	h/h	Միջոցառումը	Նկարագրությունը
	1	Կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգի (ԿՖԿՏՀ) ներդրման համար անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներ	ԿՖԿՏՀ-ի տեխնիկական և գործառնության մեթոդական պահանջների և մասնագրերի հիման վրա մշակված մրցության փաստաթղթերի ամբողջական փաթեթի առկայություն:
	2	ԿՖԿՏՀ-ի գնում	Կիրականացվի ԿՖԿՏՀ-ի մրցույթի իրականացման փաստաթղթերի ամբողջական փաթեթի կազմում, մրցույթի իրականացում
	3	ԿՖԿՏՀ-ի ներդրում	Կիրականացվի համակարգի փորձարարական թեստավորում (տվյալների փորձնական փոխակերպում և միգրացիա): ԿՖԿՏՀ-ից օգտվողների խմբեր, կկազմվի ուսուցումների ծրագիր և ժամանակացույց, կիրականացվեն ԿՖԿՏՀ-ի օգտվողների ուսուցում:

»: